

սու պարերուն նկարագրութեան մէջ, կը նշանակէ Սերէնա՝ թէ անոնք Պարսկաստանէն առնուած են, միայն քիչ մը փոխուած այն լեռնականներէն : Սակայն կ'ըսէ ինքն, որ լեզուիկը պարբն, ինչպէս որ սովորաբար 'ի գործ կը դրուի, ինքն իրեն բանաստեղծութիւն մ'է : Բոլոր շարժումներ և թերութեք ե-

րերումներ են, որուն երաժշտութիւնը նոյն ինքն հանդիստեղծը զարնեն ձեռքերնին միակերպ չափակցութեամբ : Սերէնա տիկնոջ կողմէն մատենան հաւանորէն սպառաշունչ հետ իր անունը պիտի կապէ : յիշատակարան մը պիտի ըլլայ՝ որ ինքն իր ձեռքը կանգնեց :

ՎՍՃԱՍՈՒԿԱՅՆՈՒԹԻՒՆ ԿԱՐՄԻՐ ԾՈՎՈՒ

Տե՛ս Մոնտ պարերական թերթին վաճառականութեան և ճարտարութեքաղաքական հանդիսին մէջ՝ հետեւեալ տեղեկութիւնք կը գրէ Մաքս Հոֆման : Հին առնէ կարմիր ծովուն վաճառականութիւնն գրեթէ Միջերկրականին հաւասար բարեբաղդ և ծաղկած էր : Պտղովմեանց ժամանակը յափունս կարմիր ծովուն կային շատ շքեղ քաղաքք, որք մնացին նաև Հոսովմայեցոց տիւրապետութեան ժամանակ : Երբ Արաբացիք իշխեցին եղիպտոսի, դադրեցան ամենայն բարգաւաճանք : Շատ դարերէ ետքը, յաղորեցան վենետիկցիք կարմիր ծովուն ճանապարհաւ Հնդկաց վաճառականութիւնը եղիպտոսի վրայօք ընել : Բայց երբ Բորգուգայցիք Բարեյուսոյ Գլխոյն չորս կողմը պտըտող ուղին գտան, դադրեցաւ այն վաճառականութիւնն, և երկար ժամանակ տուրևառիկ նաւք չկտրեցին կարմիր ծովը :

Մուհամմէտ — Սաիտի գահակալութիւնն՝ արթնցուց այն դաւառաց առևտրական կենդանութիւնը : Այն իշխանն պատրաստեցաւ արգեամբք կատարել այնքան ժամանակաց երազը, նոր ճամբայ մը բանալով Հնդկաց բերքը կարմիր ծովով ղրկելու, և իսմայէլ խըտիլն զօրեղապէս օգնեց 'ի կատարումն մեծագործ ձեռնարկութեանն, — Սիւէզի ջրանցքին, — որուն անունը՝ Ֆէրտիմանտոյ Լեասերսի անունն հետ պնդապէս կապուած է : Այն տոնէնէն մինչև ցարդ օր առուր երթալով աւելի

բարգաւաճեցաւ վաճառականութիւնն և անդադար ալ կ'առաւելուն համեմատութիւնն, որ մեր յետագայից պիտի յիշեցնեն արդի ժամանակին մեծամեծ արարուածքը : Ոչ միայն կարմիր ծովէն Հնդկաց տեղափոխութիւնն երթալով միշտ աւելցաւ, այլ նաև բազմաշաղկապ փոփոխումներ, նոր ճանապարհին ծովային ափունքն տեսան Արևելից և Արևմտից ժողովրդոց հետ յարաբերութեանց յառաջ եկած բարիքը :

Կարմիր ծովն, 'ի Սիւէզէ և 'ի Պապէլ — Մանտեպէ, 2140 քիլոմետր երկայնութիւն մը, և 14 քիլոմետր միջին լայնութիւն մ'ունի : Ի հիւսիսակողմն կը փչէ հիւսիսոյ հողմն. ընդհակառակն 'ի հարաւ՝ փոփոխական դառնոյն մէջ է. հօն յապրիլէ 'ի դեկտեմբեր հիւսիս — արևելեան հողմն կը փչէ, և տարւոյն ուրիշ ամսոց մէջ հարաւ — արևմտեան կամ հարաւային հողմն :

Բայ 'ի կարմիր ծովը յաճախող աւանայն ազգայն նաւերէն, կ'անցնին կանոնաւոր կերպով Սիւէզի ջրանցքէն մեծամեծ նաւք, Բէնիկսայէր Էնտ Օրիէն, դալ սոյսն Էնկիկէշլըն Գումբանի, Պոմպէ Էնտ Պէնկայ սոյսն Գումբանի, Մէսաթրի Էնսիսիւնայ և Գումբանիս Արիօն Էնկերութեանց : Առաջին երեք ընկերութիւնքն քանի մը ժամ միայն կը կենան 'ի Սիւէզ և յԱլէն, և հաղորդակցութիւն մը չունին ծովափանց բնակչաց հետ : Ընդհակառակն Արիօն Էնկերութեանց նաւաւ հանգստից մեծապայն

մասին մէջ կը կենան, հաղորդակցու-
թիւն ունին կարմիր ծովուն ափանց
վաճառականութեան հետ, և բռն կը
փնտռեն ու կը տանին: կարմիր ծովուն
ալիքը կտրող այն ինն նաւք միշտ ծան-
րաբեռինք են, և կը դնեն կանոնաւոր
և անդադար յարաբերութեան մէջ
զՍիւէզ, զՃէտտայի և զՍուաքիմ: այլ
յաճախ մեկնելու և հասնելու ժամերը
կը փոխեն, քիչ անգամ փոքր նաւա-
հանգստից մէջ կը կենան, և բազմալիւն
ճիւղն սակագիրը մ'ունին, որ կը դա-
սաւորէ զվաճառա՝ ի վեց տեսակս:

Բաց յԱլիզիէն՝ տեղական տուր-
հառն կայ, զոր ուղիք վրայ կը բռնեն
ծանրամարմին նաւակք, շատ յոռի շի-
նեալք, յարաբ վաճառականաց: Այն նա-
ւակներն, որոց բեռը քիչ անգամ քսան
տակառայափը կ'անցնի, ծածկուած
չեն, ստէպ ջրոյ տակ կ'երթան, սովո-
րական պատահած ֆուսներէ վաճառ-
քը չեն ապահովցնէր, քսանուորսն օր
կ'անցընեն երթալու Սիւէզէն ի Մաս-
սաուհ, ութ օր՝ ճէտտայէն ի Մաս-
սաուհ, զրեթէ միշտ ծովափանց ե-
ղերքի մօտ կը նաւարկեն, և գիշե-
րուան դէմ աւազակութից մօտերը խա-
րիսխ կը ձգեն: Այն նախնական նա-
ւակներն ծովափանց երկայնութեամբ
յարաբերութիւնք կը պահեն, և միշտ
դէպ ի Սիւէզ ուղիւնալք են, ուր իրենց
ամենայն ճանապարհորդութեանց կա-
տարածն է:

Տարուէ տարի կարմիր ծովուն նաւա-
հանգիստներու կը թափին աւելի քան
զ13 միլիոն ֆրանգս արժէից, որուն
վաճառատարութիւնն 15 միլիոն ֆրան-
գը կ'անցնի:

կարմիր ծովուն բոլոր նաւահան-
գիստներուն մէջէն յայտնի է թէ կա-
րէորտալոյն ճէտտայինն է. 20,000 բը-
նակչք քաղաք մը, յորում Մէքքէի
ուխտադատութեան եղանակին մէջ
75,000էն աւելի անձինք կը բնակին:
Ուխտաւորքը տեղափոխող նաւք՝ բաց
ի ճանապարհորդաց՝ բեռնաւորեալք
են 125 միլիոնէն աւելի արժէիւք, և
իրենց մեկնելու ժամանակ զրեթէ

միշտ քլորային աղ կը բեռնաւորեն, որ
շատ անգամ ճէտտայի շրջակայքը կը
գտնուի, որուն նաւահանգիստն շատ
ընդարձակ է, այլ քիչ խոր և շրջա-
պատեալ բստային ժայռերով, որ կը
ստիպէ մեծամեծ նաւերը քաղաքէն
բաւական հեռաւորութեամբ խարխիս
նետելու:

Գուր և Եամպոյ, կրկին նաւահան-
գիստք աւելի դէպ ի հիւսիս շինեալք,
մեծ յարգ մը չունին և չեն կրնար բաղ-
դատուիլ ճէտտային հետ, որ, թէ-
պէտ և վաճառատարութեան յատուկ
բերք չտայ, սակայն կը ծառայէ իբրեւ
միջնորդ և իբրեւ տեղի պահեստի ա-
մենայն բերոց կարմիր ծովու:

ճէտտայի հարաւային կողմը լոհէ-
ճայ և Հոտէիտայ նաւահանգիստքն կը
գտնուին, յորոց կը տեղափոխեն զքաֆ-
ֆէ և ուրիշ բանի մը բերք երկրին:
Միւլահ նաւահանգիստն, որ երբեմն
շատ յարգ ունէր, հիմայ գրեթէ բնաւին
առանց վաճառականութեան է:

Գալով ի հիւսիսոյ, Եգիպտոսի ծով-
ափանց վրայ նախ կը գտնուի Գոս-
սէիր, նաւահանգիստ՝ որ աղէկ նաւա-
կայան մ'ունի, յորում քիչ կը յաճա-
խեն նաւք: Գոսսէիր քաղաքին շրջա-
կայքը կը գտնուին Թանկայի ծծմբոյ
հանք, զոր կը բանի գաղղիացի ա-
րուեստգիտական ընկերութիւն մը:

Գոսսէիրէն շատ աւելի յարգ ունի
Սուաքիմ, կղզոյ մը վրայ շինուած քա-
ղաք, պատուական նաւահանգիստով,
սակայն ասոր մուտքն նեղ և դժուար
կու գայ նաւուց: Քաղաքին չորս կողմը
երկիրն բոլորովին անարգասաբեր է,
այլ Սուաքիմ՝ Նիլոսի և Հապէշիստա-
նի լեռանց մօտ ըլլալու մեծ շահն կը
վայելէ, և արդէն հեռագրական զիծ
մ'ունի, որոյ երկայնութեամբ քիչ ա-
տենեն երկաթուղի մը պիտի շինուի:

Մասսաուհա՝ Հապէշիստանի լեռանց
ստորոտն է, այլ ծովափանց զանազան
աղգաց քաղաքագիտութիւնն և ցեղի
ատեւութիւնն կը հակառակին որ և ի-
ցէ խաղաղական փոխանակութիւն ը-
նելու այս նաւահանգստիս հետ. այս

պատճառաւ աւելի կ'ընտրեն Սուաքիմ երթալու համար ճէտարէֆէն և Գասառայէն շրջան ընել։ Մասսաուաճ, որ նոյնպէս կղզւոյ մը վրայ կառուցեալ է, աղէկ նաւակայան մ'ունի։ Վարչութիւնն հոգ տանելով այս քաղաքին վրայ, գուարճալի բնակութեան տեղ մ'եղաւ. ուր կը գտնուին քարաշէն եւ բոպական տունք և մթերանոցք։ Ըմպելի ջուրն իւղովակաց միջոցով ցամաք երկրէն հօն կը հասնի, և հիմայ 'ի Մասսաուաճ կը բնակին մեծածիւ եւրոպացիք, որոնք այլ և այլ արուեստներու կը պարապին։

Մասսաուաճ՝ Հապէշիստանի հետ յարաբերութիւն ունի, այլ ինչպէս արդէն ըսինք, քաղաքագիտական պատճառք շատ փնասեցին այն յարաբերութեանց։ Հապէշիստանի մեծամեծ կալաւանք յունիսի և յուլիսի մէջ կը հասնին հօն, սասակագոյն տաք եղած ժամանակը ստիպուած ըլլալով ճամբայ ընել, որպէս զի գետերը կարենան անցնիլ, յորոց մեծադոյնն Դագազդէն է։ Բարեկալիոյ տարեաց մէջ, Հապէշիստանէն 'ի Մասսաուաճ գնացող կարաւանք քսանի մը կը հասնին, և անոնց իւրաքանչիւրն 500,000 ֆրանգաց վաճառք կը տանի, որ կը փոխանակէ աւստրիական հին կնքօք դրամներով, այսինքն է դալլերներու վրայ Մարիաթերեզայի պատկերներով, զոր Վիեննայի փողերանոցն կը շարունակէ հին կնքօք կոխել։

Գործերն կ'ըլլուն 'ի ձեռն արտք և հնդիկ միջնորդաց, Հապէշիստանէն եկած գլխաւոր նիւթերն են խէժ, մամ, մեղր, խունկ, փղսկր, շալլամի փետուր, կաշի, հելուկ կողի, ընտանի տնաստնէք, ջրիք և զանազան համեմք և գունաւորող նիւթք։ Փափֆէն սառլին է քան զԱրաբիային, այլ շատ աւելի մեծադոյն քանակութեամբ։ Բոլոր այս նիւթերն կը յորդեն 'ի Սիւէզ և յայլ նաւահանգիստս Էրամիր ծովու, ուստի ապա կը տեղափոխին յԵւրոպա և 'ի Հնդկիս։ Նախասացեալ նիւթոց վրայ պէտք է աւելցընել նաև ծովուն

բերքը, մարդարիտը, սատափի պատեանք, բուսնք և կալաքարի և աղի հանքաց բերքը։

Վաճառաբերութիւնն կը կայանայ զգետնուց վրայ. անդդիական կտաք և բամբակ և շէորդիկն շատ գնողներ կը գտնեն, թէպէտ Հապէշիստանի լեռնականք զոհ կ'ըլլան այն թեթև կտաւներով և իրենց կողմանէ աւելի թանձր և աւելի տեական կտաւ մը կը շինեն։ Ի Հնդկաց կու գան մետաքսեայ հիւսուածք և բեհեզք։

Մրովափանց բնակչաց գործածած ֆէնսերն կամ գլխարկքն, Գրիէստի կամ Շէմիկի ճանապարհաւ հօս կու դան. շատ կը փնտրուին ապակեղէնք, գուշաւոր ապակիք, Պոհեմիոյ բիւրեղք, երկաթէ գամք, արուեստագիտի կաղամածք և սրոյ երկաթք (շինեալք 'ի Սզիլիս)։ Շատ աղէկ առուտուր կընար ըլլիլ 'ի Մասսաուաճ հրազէններ բերելով, այլ եգիպտական կառավարութիւնն որ բնաւ կամք չունի զինել իր մերձակայքը, իստիւ կ'արդեւու հրացանաց, ատրճանակաց և նմանեաց վաճառք, իր փնտրուին նաև փայտէ և մոմէ լուցկիք, մարթէ ագանեղիք։

Կարմիր ծովուն ափուէք բերել կու տան յորեն, ընդեղէն և բրինձ յեգիպտոսէ և 'ի Հնդկաց, այլ սակայն իրենք ալ կու տան շաքարը։

Այսօրուան օրս Եւրոպա Կարմիր ծովուն ափանց հետ երեքտասան միլիոն ֆրանգաց դրամափոխութիւն մը կ'ընէ, մինչդեռ Սիւէզի ջրանցքը բանալէն յառաջ, հազիւ չորս միլիոնի կը հասնէր այն դրամափոխութիւնն։ Սակայն անտարակուսելի է, որ որչափ աւելի եւրոպեան քաղաքականութիւնն հաստատանք արմատ ձգէ այն դեռ կէս վայրենի ափրիկեան ժողովրդոց մէջ, և երբ ասոնք սորվին հաւասարապէս մեծարել փոխադարձ յարաբերութիւնք, այնպէս որ իրենց բերքն կարենան գուհացընել Եւրոպիոյ պիտոյքը և դրսէն բերուած բերքը զոհացընել, առևտրական շարժումն երթալով մեծապէս պիտի ծաւալի և շարունակաբար երթալ։

լով պիտի առաւելու վաճառականու-
թեան կարեւորութիւնն:

Սակայն ինչ որ ալ ըլլայ, յայտնի է
որ Սիւէգի ջրանցից բացմամբ, եւրոպա-
իրեն մօտ ունեցաւ երկրի մեծ տարա-
ծութիւն մը, որոյ հետ կրնայ օգտա-

կար դրամափոխութիւններ ընել, և թէ
այն երկիրն եւրոպական տարազադո-
ծաց և վաճառատարաց մտադրութիւնը
բոլորովին կրնայ քաշել, վասն զի կու-
տայ անոնց յաջողութեան բազմապա-
տիկ հաւանականութիւն:

Մեծամեծք իրք աշխարհիս: — Աշխարհիս
մեծագոյն հովիտն Միսիսիպիին (Միս-
ցեալ Նախանգը) է, որ 5000 քառակուսի
մղոն ունի, և երկրիս բեղնաւորագոյն գա-
ւառներէն մին է:

Աշխարհիս մեծագոյն ճանապարհն՝ Փի-
լադելիոյ ֆէյիմոք Բարքն է, որ 29 (Օակրո-
նի (acre) միջոց մ'ունի: Մեծագոյն ցո-
րնի վաճառանոցն խիզակոյինն է: Մե-
ծագոյն լիճն՝ ի Միսցեալ Նահանգս վերա-
գոյն լէյքի լիճն է, որ 480 մղոն լայնու-
թիւն ունի, 1900 ոտք խորութեամբ: Եր-
կայնագոյն երկաթուղին խաղաղականին
գիծն է, 50,000 մղոն: Մեծագոյն բնական
կամուրջն Միացեալ Նահանգաց մէջ ի
Վիրգինիա Սիտա Կրեք կամուրջն է, ծո-
վուն մակարդակէն 250 ոտք բարձր և 80
լայն է: Աշխարհիս մէջ եղած մեծագոյն
երկաթոյ գանգուածն՝ այս մետաղիս պզտի
լիւ մ'է ի Միսսուրի (Միացեալ Նահանգք),
բարձր է 550 ոտք և երկու մղոնի չընա-
պատ մ'ունի: Մեծագոյն ջրմուղն՝ ի Նոր
Եօրք՝ Գրիգընին է, 40 մղոն և կէս եր-
կայնութիւն ունի և արժեց քանի մը մի-
լիոն տոլլար: Մեծագոյն սահանքն՝ Նիա-
կարայի ջրվէժքն են: Գեղեցկագոյն և ա-
մենէն աւելի կատարեալ որմափակ սպար-
տէզն (pare) Նոր Եօրքի Կեդրոնական Պար-
տէզն է, Յաշխարհի ճանչցուած երկոյնա-
գոյն հեռագրական գիծն՝ Սիպերիայինն է,
որ ի Պետրպուրկէ կը հասնի Ամուր գե-
տոյն բերանը, ի սահմանադրութիւն ռուս
չինացի և Վիատիովուզդք, որ արդէն Շան-
կայն և Հոնկ-Հոնկի նաւահանգստից հետ
Պալդիկի ծովափունքը միացուց: — այս
գծին առաջին հեռագրալուրն 28 նոյեմբեր
1870ին դրկուեցաւ: Ի Սաքսոնիա ֆրէյ-
հէրկհանքաց մէջ աշխարհիս ստորերկրայ

երկայնագոյն շինութիւնն կը գտնուի. և յի-
րաւի 1855ին վերջերն անցքերն 23 մղոն
ամբողջական երկայնութիւն մ'ունէին, 163
բլիժմեզրի հաւասար: Իսկ Ռոչէշտայէրկ
հանքաց մէջ անցք մը կայ, որ հիմայ, եր-
կորդական անցքերն հաշուելով, 29,000
մեզր ամբողջական երկայնութիւն մ'ունի,
և քիչ ատենէն 50,900 մեզր երկայն օլիտի
ըլլայ, կամ գրեթէ գերմանական 7 մղոն.
Նմանը չկայ յաշխարհի: Ժառնալ Օֆիսիէ
կ'իմացընէ մեզ որ գորովարն Ուայցըլ, Միա-
ցեալ Նահանգաց երկրաչափ, կը լինցընէ
մօտեքս ի Սուրբ Մարիամ, ուր Էլրիէ լճին
հետ Հուրոն լիճն կը միանայ, հոսանքի (é-
cluse) մը շինութիւնը, որ աշխարհիս մե-
ծագոյնն պիտի ըլլայ: 515 ոտք երկայնու-
թիւն, 80 լայնութիւն ունի. 60 ոտք լայնու-
թեամբ նաւ մը իր դռներէն պիտի կարե-
նայ անցնի: Զօրավարն Ուայցըլ կը կարծէ
որ միայն մետառան վայրկեան բաւական
ըլլան նաւու մը մտից բանալուն և ելից
փակելուն համար: Այս շքեղ աշխատու-
թիւնս պիտի դարգացընէ և ևս մեծամեծ
լճից մէջ նաւարկելը, մանաւանդ քանի որ
Գանատա իր կողմանէ՝ Սուրբ Լաւրենտիոս
սի կողմնական ջրանցները կը մեծընէ և
կը կատարելագործէ:

Այս ամենայն աշխատութեանց պատ-
ճառն՝ Տոմենիոնի և Միացեալ Նահանգաց
ներքին գաւառները, որոնք ծովէն 1600
բլիժմեզր հեռու են, իթէ ոչ կարճ, գոնէ
աւելի տնտեսական ճանապարհաւ մը Առ-
լանդականին հետ միացընելու դիրքի մէջ
գնելու համար է, այսինքն է ջրոյ ճանա-
պարհաւ, և սրուեստական միջոցներով
կատարելագործելու զայն՝ զոր արդէն բնու-
թիւնն մասամբ մը պատրաստած է: